

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՄԱՐԻՆԵ ԱՂՎԱՆԻ

**ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ
(ԱՆԳԼԵՐԵՆ ՆՅՈՒԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)**

ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու)
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ
Սուսաննա Պարզևի Ասատրյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝** բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր
Լուսինե Արմենի Հարությունյան


մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ
Մետաքսյա Ազատի Դարաբյան

**Առաջատար
կազմակերպություն՝** **Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026թ. հունիսի 22-ին, ժամը 12:00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026թ. մայիսի 21-ին:

«Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝  Թերեզա Յուրիի Ազատյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը

Ժամանակակից աշխարհում համաշխարհայնացման շարունակական միտումները, միջազգային համագործակցության ընդլայնումը, ինչպես նաև տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների արագ զարգացումը զգալիորեն մեծացնում են անգլերենի դերը որպես միջազգային հաղորդակցության հիմնական միջոց: Անգլերենը լայնորեն կիրառվում է քաղաքական և դիվանագիտական հաղորդակցության, միջազգային կազմակերպությունների գործունեության, միջպետական բանակցությունների, քաղաքական որոշումների մշակման գործընթացներում՝ ապահովելով տարբեր լեզվամշակութային համակարգերի ներկայացուցիչների միջև արդյունավետ և նպատակային փոխըմբռնում: Անգլերենը շարունակում է առաջատար դիրք զբաղեցնել միջազգային լեզվաքաղաքական համակարգում:

Քաղաքականությունը, լինելով հասարակական կյանքի անբաժանելի բաղադրիչ, ներթափանցում է մարդկային փոխազդեցության գրեթե բոլոր ոլորտները, ինչի արդյունքում քաղաքական հաղորդակցությունը վերածվել է հասարակական զարգացումների արտացոլման և մեկնաբանման դինամիկ գործիքի: Քաղաքական գործընթացների բազմաձև դրսևորումները, ինչպես նաև դրանց գիտական հիմնավորումը, վերլուծությունը և օբյեկտիվ մեկնաբանումը պահանջում են մասնագիտական լեզվահաղորդակցական միջոցների կիրառում, ինչն իրականացվում է քաղաքագիտական խոսույթի տիրույթում:

Լեզվակիրության զարգացման արդի հիմնախնդիրներից ելնելով՝ Հայաստանի Հանրապետության բուհական կրթական համակարգում իրականացվող բարեփոխումների կարևոր ուղղություններից է օտար լեզուների ուսուցման գործընթացում նոր ռազմավարությունների, ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների մշակումն ու կիրառումը: Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն և բովանդակություն է ձեռք բերում հատուկ նպատակների համար անգլերենի (English for Specific Purposes, այսուհետ՝ ESP) դասավանդումը, որը նպատակաուղղված է սովորողների մասնագիտական լեզվահաղորդակցական կարողունակության ձևավորմանն ու զարգացմանը: Մասնագիտական, այդ թվում՝ քաղաքագիտական անգլերենն անհրաժեշտ է ոչ միայն լեզվական գիտելիքների ձեռքբերման, այլև մասնագիտական գործունեության ընթացքում արդյունավետ հաղորդակցություն իրականացնելու, տեղեկատվությունն ընկալելու, մեկնաբանելու, վերլուծելու և փոխանցելու համար:

Քաղաքագիտական անգլերենի դասավանդման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է անձնակենտրոն մոտեցման կիրառմամբ, որի

շրջանակում լեզվանյութի ընտրությունը, դասակարգումը և ուսուցման կազմակերպումը հիմնվում են սովորողների մասնագիտական կարիքների, դրդապատճառների, հետաքրքրությունների և հաղորդակցական պահանջունքների վրա: Նման մոտեցումը ենթադրում է սովորողների լեզվական և թիրախային կարիքների համակարգված ուսումնասիրություն և հաշվառում ուսումնական գործընթացի բոլոր փուլերում: Այստեղից էլ բխում է սույն հետազոտության արդիականությունը՝ պայմանավորված ՀՀ մասնագիտական կրթական հաստատություններում սովորողների քաղաքագիտական անգլերեն լեզվահաղորդակցական կարողունակության զարգացմանը նպատակաուղղված ուսուցման արդյունավետ մեթոդական համակարգի մշակման և կիրառման անհրաժեշտությամբ: Հետազոտության թեմայի արդիականությունը հիմնավորված է նաև Հայաստանի Հանրապետությունում մեր ուսումնասիրած թեմային առնչվող հիմնարար հետազոտությունների բացակայությամբ:

Արժևորելով թեմայի արդիականությունը՝ հետազոտության շրջանակում փորձ է արվել բացահայտել բուհերում քաղաքագիտական անգլերենի ուսուցման գործընթացում սովորողների մասնագիտական լեզվահաղորդակցական կարողունակության զարգացման առկա դժվարությունները և առաջարկել դրանց հաղթահարման գիտագործնականորեն հիմնավորված լուծումներ: Այս համատեքստում ակնհայտ է դառնում քաղաքագիտական անգլերենի ուսուցման մեթոդական համակարգի մշակման և փորձարարական հիմնավորման անհրաժեշտությունը: Արդյունքում սովորողներն առավել հստակ կպատկերացնեն՝ ինչպես արդյունավետ կիրառել լեզուն մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպիսի լեզվահաղորդակցական հմտությունների պետք է տիրապետեն և ինչ մակարդակով, ներառյալ ինչպիսի լեզվաոճեր են անհրաժեշտ ընկալողական (ունկնդրում, ընթերցում) և արտադրողական (բանավոր խոսք, գրավոր արտահայտում) խոսքային գործունեություն ծավալելիս:

Հիմնախնդրի մշակվածության աստիճանը

Հայալեզու, ռուսալեզու և անգլալեզու մեթոդական աշխատանքներում որոշակիորեն ուսումնասիրվել է քաղաքագիտական անգլերենի բառապաշարը: Սակայն հարկ է նշել, որ սովորողների քաղաքագիտական լեզվահաղորդակցական կարողունակության ձևավորման ու զարգացման, քաղաքագիտական անգլերենի ուսուցման մեթոդական համակարգը մշակելու և վերջինս լսարանում կիրառելու հիմնախնդիրները դեռևս առանձին ուսումնասիրության առարկա չեն դարձել: Առկա աշխատություններում կարելի է առանձնացնել հետազոտություններ, որոնք առնչվում են մասնագիտական բառապաշարի ուսուցման հիմնախնդիրներին՝ Վ. Ա. Բուխրինդեր (1986), Թ.

Հաթչինսոն և Ա. Ուոթերս (1987, 2009), Հ. Ա. Ճանճապանյան (2002), Ս. Պ. Ասատրյան (2006), Ն. Վ. Պողոսյան (2025), քաղաքագիտական խոսույթի ուսուցման դրույթներին՝ Մ. Ի. Մակարով (2003), Ե. Ի. Շեյգալ (2004), Փ. Չիլթոն (2004), Տ. Ա. Դեդուշկինա (2011), Պ. Միլլեր (2011), Է. Հ. Օրդուխանյան (2016), Դ. Ս. Չեկմենև (2016), համագործակցային և փոխներգործուն համատեքստում բառապաշարի ուսուցման հիմնախնդրին՝ Դ. Բրաուն (1994), ուսուցման գործընթացում բնագրային լեզվանյութի կիրառման հիմնահարցերին՝ Զ. Հարմեր (2007, 2010), Ս. Պ. Ասատրյան (2019): Հիմնախնդրի վերաբերյալ առկա են որոշ հայկական և արտասահմանյան թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ՝ մեդիա խոսույթի համակցված քննություն (անգլերեն քաղաքական խոսույթի հիման վրա), Ռ. Գ. Հարությունյան (2022), մասնագիտական ուղղվածությամբ քաղաքական անգլերենի ուսուցում, Ա. Ա. Լուզանովա (2023), քաղաքագիտական խոսույթի լեզվաճանաչողական մոդելավորում, Դ. Ի. Կասիմովա (2023), քննական մտածողության զարգացումը քաղաքագիտական անգլերենի ուսուցման գործընթացում, Ս. Ապաիրախ (2025): Հետազոտության շրջանակում կարևորվում են Եվրասիոհրդի լեզվակրթության ոլորտին առնչվող հիմնարար փաստաթղթերը:

Հետազոտության նպատակը

Քաղաքագիտական անգլերեն լեզվանյութի հետազոտության հիման վրա մշակել և ուսումնական գործընթացում ներդնել քաղաքագիտական անգլերենի ուսուցման արդյունավետ մեթոդական համակարգ՝ ուղղված սովորողների մասնագիտական լեզվահաղորդակցական կարողունակության ձևավորմանն ու զարգացմանը:

Հետազոտության օբյեկտը քաղաքագիտական անգլերեն լեզվանյութի ուսուցման գործընթացն է:

Հետազոտության առարկան քաղաքագիտական անգլերենի ուսուցման գործընթացում սովորողների մասնագիտական լեզվահաղորդակցական կարողունակության ձևավորմանն ու զարգացմանը նպատակաուղղված մեթոդական համակարգն է:

Հետազոտության գիտական վարկածը

Եթե ուսումնական գործընթացում կիրառվի սովորողների լեզվահաղորդակցական կարողունակության զարգացմանը միտված մեթոդական համակարգ, որը ներառում է քաղաքագիտական թեմաներով բնագիր տեքստեր, համապատասխան մասնագիտական բառապաշար, լեզվական կառույցներ, ինչպես նաև ուսուցողական պաստառներ, աշխատանքային թերթիկներ, ավանդական և ժամանակակից մեթոդների համադրությամբ մշակված առաջադրանքներ և առցանց ուսումնական գործիքակազմ, ապա հնարավոր կլինի նվազեցնել սովորողների

քաղաքագիտական լեզվանյութն ընկալելու դժվարությունները և բարձրացնել քաղաքագիտական անգլերենի ուսուցման արդյունավետությունը:

Հետազոտության խնդիրները

Հիմք ընդունելով հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, վարկածը՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել մասնագիտական անգլերենի ուսուցման նպատակը, առանձնահատկությունները և հիմքում ընկած տեսական դրույթներն ու մոտեցումները,
- վերլուծել քաղաքագիտական անգլերենի ուսուցման հիմնախնդիրները, քննության առնել քաղաքագիտական անգլերենի դասագրքերը և ուսումնամեթոդական նյութերը՝ դրանց բովանդակային և կառուցվածքային առանձնահատկությունները բացահայտելու նպատակով,
- դիտարկել քաղաքագիտական անգլերեն լեզվանյութի ընտրության սկզբունքները, իրականացնել մեթոդական դասակարգում և ներկայացնել ուսուցման փուլերը,
- մշակել և փորձարկել քաղաքագիտական անգլերենի ուսուցման օրինակելի մեթոդական համակարգ, որը միտված է սովորողների մասնագիտական լեզվահաղորդակցական կարողունակության զարգացմանը,
- իրականացնել սովորողների նախափորձարարական և հետփորձարարական թեստավորում և կատարել ստացված արդյունքների վիճակագրական վերլուծություն,
- հիմնավորել մշակված մեթոդական համակարգի արդյունավետությունը փորձարարական ուսուցման արդյունքների վերլուծության հիման վրա:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը

Հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմում են ժամանակակից լեզվակրթական և մանկավարժամեթոդական հիմնարար հայեցակարգերն ու տեսությունները, որոնք վերաբերում են մասնագիտական անգլերենի (ESP), մասնավորապես՝ քաղաքագիտական անգլերենի ուսուցմանը բուհական կրթության համակարգում: Հետազոտության մեթոդաբանական հիմքում ներառված են նաև քաղաքագիտական խոսույթի ուսումնասիրման, քաղաքագիտական բնագիր տեքստերի ուսուցման, մասնագիտական բառապաշարի յուրացման տեսությունները, ինչպես նաև ուսուցման ժամանակակից և թվային միջոցների կիրառման հնարավորությունները: Ավանդական և ժամանակակից մեթոդների, ուսուցողական պաստառների, աշխատանքային թերթիկների և առցանց ուսումնական գործիքների կիրառումը դիտարկվում է որպես մասնագիտական լեզվահաղորդակցական կարողունակության արդյունավետ զարգացման նախապայման:

Ատենախոսության հիմնախնդրի շրջանակում կատարված հետազոտության համար առանցքային նշանակություն են ունեցել Թ. Հաթչինսոնի և Ա. Ուոթերսի՝ հատուկ նպատակների համար անգլերենի (2009), Փ. Չիլթոնի՝ քաղաքագիտական խոսույթի վերլուծության (2004), Տ. Ա. Դեդուշկինայի՝ քաղաքագիտական խոսույթի ժանրային առանձնահատկությունների (2011), Ն. Վ. Պոդոլյանի՝ մասնագիտական բառանյութի ընտրության և մեթոդական տիպականացման սկզբունքների (2012), Դ. Ս. Չեկմենևի՝ սոցիալ-քաղաքական խոսույթի (2016), Ս. Պ. Ասատրյանի՝ լեզվահաղորդակցական ուսուցման համատեքստում անգլերենի (2019), Ն. Վ. Պոդոլյանի՝ լեզվահաղորդակցական ուսուցման համատեքստում մասնագիտական անգլերենի (2025) վերաբերյալ ուսումնասիրությունները, դրանցում առաջադրված տեսակետները, դրույթներն ու գաղափարները:

Հետազոտության մեթոդները՝

Առաջադրված խնդիրների լուծման համար կիրառվել են հետևյալ մեթոդները՝

- **տեսական՝** հետազոտության հիմնախնդրին առնչվող մասնագիտական գրականության ուսումնասիրություն, վերլուծություն,
- **էմպիրիկ՝** մշտադիտարկում, զրույց, հարցում, նախափորձարարական (հայտորոշիչ) թեստավորում, փորձարարական ուսուցում, հետփորձարարական թեստավորում,
- **վիճակագրական՝** մաթեմատիկական-վիճակագրական վերլուծություն:

Հետազոտության գիտական նորույթը

Հայ իրականության մեջ մշակվել և քաղաքագիտական անգլերենի ուսուցման գործընթացում փորձարկվել է սովորողների մասնագիտական լեզվահաղորդակցական կարողունակության զարգացմանը նպատակաուղղված արդյունավետ մեթոդական համակարգ: Մշակված մեթոդական համակարգը փորձարկվել է ՀՀ բուհերում՝ մասնագիտական անգլերենի ուսուցման գործընթացում, ինչը թույլ է տվել գործնականում հիմնավորել մշակված մեթոդական համակարգի արդյունավետությունը: Սույն մեթոդական համակարգը կարող է կիրառվել նաև այլ մասնագիտական լեզուների ուսուցման գործընթացում՝ սովորողների մասնագիտական լեզվահաղորդակցական կարողունակության զարգացման նպատակով:

Հետազոտության տեսական նշանակությունը

Ուսումնասիրության առարկա են դարձել տարբեր ժամանակաշրջաններում հրապարակված քաղաքագիտական անգլերենի դասագրքերի բովանդակությունը, առաջադրանքներն ու վարժությունները: Որպես տեսական նշանակություն՝ արժևորվում են քաղաքագիտական դասագրքերի ընտրության չափանիշները, քաղաքագիտական խոսույթի

ուսուցման առանձնահատկությունները, ինչպես նաև մասնագիտական բնագիր տեքստերի և բառապաշարի ընտրության սկզբունքներն ու չափանիշները:

Արդյունքում, քաղաքագիտական անգլերենի բնագրային, բառապաշարային և տերմինաբանական լեզվանյութի համակողմանի ուսումնասիրության հիման վրա մշակվել է քաղաքագիտական անգլերենի ուսուցման մեթոդական համակարգ, որը կարող է տեսական հիմք ծառայել հետագա գիտական և մեթոդական հետազոտությունների համար:

Հետազոտության գործնական նշանակությունը

Հետազոտության արդյունքները կիրառելի են բուհերում՝ քաղաքագիտական անգլերենի դասավանդման, ինչպես նաև այլ մասնագիտական լեզու դասավանդելու ընթացքում՝ մշակված մեթոդական համակարգը համապատասխանեցնելով տվյալ մասնագիտական լեզվի ուսուցման պահանջներին, ինչպես նաև դասախոսների մասնագիտական վերապատրաստման դասընթացներում, ուսումնամեթոդական ձեռնարկներ մշակելու և ստեղծելու գործընթացներում: Սովորողների քաղաքագիտական լեզվահաղորդակցական կարողունակությունը զարգացնող մեթոդական համակարգի կիրառումը կարող է նպաստել քաղաքագիտական անգլերենի դասընթացների արդյունավետության բարձրացմանը: Ստացված արդյունքները կարող են նաև կիրառվել մանկավարժամեթոդական բազմաթիվ հետազոտություններ իրականացնելիս:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները

1. Սովորողների մասնագիտական լեզվահաղորդակցական կարողունակության զարգացումը քաղաքագիտական անգլերենի՝ որպես հատուկ նպատակների համար անգլերենի ուսուցման գործընթացում, արդյունավետ ուսուցման կարևոր նախադրյալ է:

2. Միջազգային և միջմշակութային լեզվակրթության համատեքստում բուհերում քաղաքագիտական անգլերենի ուսուցման արդյունավետության երաշխիքը սովորողների մասնագիտական կարիքների, հաղորդակցական պահանջմունքների վերհանումը և դրա վրա հիմնված սովորողակենտրոն ուսուցման կազմակերպումն է:

3. Սովորողների մասնագիտական լեզվահաղորդակցական կարողունակության զարգացմանը նպատակաուղղված մեթոդական համակարգի մշակումը և կիրառումը կարող է մեծապես բարձրացնել քաղաքագիտական անգլերենի ուսուցման արդյունավետությունը:

4. Առաջարկվող մեթոդական համակարգի՝ ներառյալ քաղաքագիտական բնագիր տեքստերի, ավանդական և ժամանակակից մեթոդների համադրությամբ մշակված բազմաբնույթ առաջադրանքների, ուսուցողական պաստառների, աշխատանքային թերթիկների, ուսումնական առցանց գործիքների միջոցով մշակված փոխներգործուն առաջադրանքների

կիրառումը կնպաստի սովորողների մասնագիտական լեզվահաղորդակցական կարողունակության արդյունավետ զարգացմանը և նրանց ուսումնառության մոտիվացիայի բարձրացմանը:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովվում են ատենախոսության թեմային առնչվող մասնագիտական գրականության ուսումնասիրությամբ, հետազոտության գիտական մեթոդաբանությամբ, կիրառված հիմնադրույթներով, ՀՀ բուհերում կատարված հետազոտությունների, հարցումների, նախափորձարարական (հայտորոշիչ) թեստավորման և փորձարարական ուսուցման ընթացքում արդյունքների ճշգրտության համար համապատասխան պայմանների ստեղծմամբ, մշակված և կիրառված ուսուցողական պատասառների և աշխատանքային թերթիկների, ներդրված թեստերի հուսալիությամբ, ամփոփիչ հետփորձարարական թեստավորման արդյունքներով, վիճակագրական տվյալների հստակեցմամբ և ստացված արդյունքների օբյեկտիվ վերլուծությամբ:

Հետազոտության փորձարարական բազան

Փորձարարական հետազոտությունն անցկացվել է Վ. Բոյուսովի անվան պետական համալսարանում, Երևանի պետական համալսարանում, ինչպես նաև Հայ-ռուսական համալսարանում:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունն իրականացվել է Վ. Բոյուսովի անվան պետական համալսարանի Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստերում, ինչպես նաև տարբեր գիտաժողովներում:

Հետազոտությունը կատարվել է երեք փուլով.

Առաջին փուլում (2021-2022թթ.) ուսումնասիրվել և վերլուծվել է քաղաքագիտական անզլերենի ուսուցման, քաղաքագիտական խոսույթի, մասնագիտական բառապաշարի ձևավորման, ինչպես նաև օտար լեզուների դասավանդման ժամանակակից մեթոդների վերաբերյալ գիտական և ուսումնամեթոդական գրականությունը: Բացահայտվել են քաղաքագիտական անզլերենի ուսուցման լեզվամեթոդական և հոգեբանամանկավարժական հիմքերը, ուսումնասիրվել են մասնագիտական լեզվահաղորդակցական կարողունակության ձևավորման արդի մոտեցումները, քաղաքագիտական անզլերենի դասավանդման հիմքում ընկած տեսական դրույթները: Վերլուծվել է հիմնահարցի մշակվածության աստիճանը մասնագիտական գրականության մեջ, հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, հստակեցվել են հիմնական հասկացությունները, որոնք կիրառվել են աշխատանքի նպատակը, վարկածը և խնդիրները սահմանելիս: Կազմվել է սույն հետազոտության իրականացման պլանը, նախանշվել են քաղաքագիտական անզլերենի

ուսուցման արդյունավետությունը բարձրացնող մեթոդական համակարգի մշակման ուղիները:

Երկրորդ փուլում (2022-2024թթ.) բացահայտվել են քաղաքագիտական անզլերենի ուսուցման գործընթացում սովորողների լեզվահաղորդակցական դժվարությունները, ուսումնասիրվել են մասնագիտական տեքստերի, բառապաշարի և հաղորդակցական առաջադրանքների կիրառման հնարավորությունները: Իրականացվել են մշտադիտարկումներ, զրույցներ, հարցումներ, կատարվել է արդյունքների վերլուծություն: Այս փուլում իրականացվել է նաև քաղաքագիտական անզլերեն լեզվանյութի մեթոդական դասակարգումը: Ուսումնասիրվել են քաղաքագիտական տերմինների, կայուն կապակցությունների, դարձվածային միավորների դասակարգման սկզբունքները՝ հայերեն-անզլերեն-ռուսերեն մեթոդական համադրության տեսանկյունից: Ատենախոսության հիմնախնդրի շուրջ մշակվել է մասնագիտական բնագիր տեքստերի, լեզվանյութի, ավանդական և ժամանակակից մեթոդների համադրությամբ մշակված առաջադրանքների, ուսուցողական պաստառաշարի, աշխատանքային թերթիկների և առցանց ուսումնական գործիքների վրա հիմնված փոխներգործուն առաջադրանքների մեթոդական համակարգ:

Երրորդ փուլում (2024-2025թթ.) իրականացվել է հարցում, նախափորձարարական (հայտորոշիչ) թեստավորում՝ քաղաքագիտական անզլերենի ընկալման, մասնագիտական բառապաշարի յուրացման և լեզվահաղորդակցական կարողունակության մակարդակը պարզելու նպատակով: Այնուհետև իրականացվել է առաջադրված վարկածի փորձարարական ստուգում (ուսուցում, կարողությունների ձևավորում, գնահատում), հետփորձարարական թեստավորում: Ստացված արդյունքները ենթարկվել են քանակական և որակական վերլուծության: Մշակված մեթոդական համակարգը փորձարկվել է բուհերում մասնագիտական անզլերենի ուսուցման գործընթացում: Մեթոդական համակարգի արդյունավետությունը հիմնավորվել է սովորողների առաջադիմության բարձրացմամբ, հետփորձարարական թեստավորման արդյունքներով: Կատարվել է աշխատանքի վերջնական խմբագրում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ատենախոսությունը ներառում է 17 աղյուսակ, 14 տրամագիր, 3 գծապատկեր, 1 նկար: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 160 համակարգչային էջ:

ԱՅԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներաճության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հիմնախնդրի մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, վարկածը, խնդիրները, հետազոտության մեթոդները, մեթոդաբանական հիմքը, հետազոտության փուլերը, սահմանված է հետազոտության գիտական նորոյթը, պարզաբանված է տեսական և գործնական նշանակությունը, ներկայացված են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության առաջին՝ **«Քաղաքագիտական անգլերենի ուսուցման արդիականությունը»**, գլխի առաջին՝ **«Մասնագիտական անգլերեն դասընթացի նպատակն ու առանձնահատկությունները»**, ենթազվխում ներկայացվում են մասնագիտական անգլերեն դասընթացի նպատակն ու առանձնահատկությունները, ուսուցման հիմնական սկզբունքները: Հիմնավորվում է սովորողակենտրոն մոտեցման առաջնահերթությունը՝ շեշտադրելով սովորողների թիրախային և լեզվական կարիքների համակողմանի վերլուծության անհրաժեշտությունը: Առանձնահատուկ շեշտադրում է կատարվել նաև կոմպետենտային մոտեցման վրա, որի շրջանակում լեզուն դիտարկվում է ոչ միայն որպես հաղորդակցման միջոց, այլև որպես մասնագիտական գործունեության իրականացման գործիք:

Երկրորդ՝ **«Քաղաքագիտական խոսույթի բովանդակային, կառուցվածքային և գործառութային առանձնահատկությունները»**, ենթազվխում քաղաքական և քաղաքագիտական խոսույթները ներկայացվում են որպես բազմաշերտ համակարգեր՝ իրենց բովանդակային, կառուցվածքային և գործառութային առանձնահատկություններով: Տարանջատվում են դրանց հաղորդակցական նպատակադրումները. քաղաքական խոսույթը դիտարկվում է որպես հանրային կարծիքի ձևավորման միջոց, իսկ քաղաքագիտական խոսույթի առանցքում դրվում են այդ գործընթացների օբյեկտիվ վերլուծությունն ու գիտական մեկնաբանումը: Ընդգծվում է նաև լեզվական և հոետորական ռազմավարությունների դերը խոսույթի արդյունավետության ապահովման գործում:

Ատենախոսության երկրորդ՝ **«Քաղաքագիտական անգլերեն լեզվանյութի ընտրությունը և մեթոդական դասակարգումը»**, գլխի առաջին՝ **«Քաղաքագիտական անգլերենի դասավանդման հիմքում ընկած տեսական դրույթները»**, ենթազվխում քաղաքագիտական տերմինաբանության յուրացումը ներկայացվում է որպես բազմաշերտ գործընթաց՝ հիմնված հաղորդակցական և գիտակցական-ճանաչողական մոտեցումների համադրման վրա: Հանգամանորեն վերլուծվում են տերմինների ընկալման հոգեբանական մեխանիզմները և հիմնավորվում է բառապաշարի փուլային ուսուցման անհրաժեշտությունը, որն իրականացվում է ընկալման,

վերլուծության և համադրման փոխկապակցվածության հիման վրա: Միաժամանակ արժևորվում են բովանդակության և լեզվի ինտեգրված ուսուցման (CLIL) և առաջադրանքահեն ուսուցման (TBL) մոտեցումները:

Երկրորդ՝ **«Քաղաքագիտական անգլերեն լեզվանյութի ընտրության սկզբունքները»**, ենթազխում մասնագիտական հաղորդակցությունը բնութագրվում է որպես քաղաքական իրողությունների գիտական արժևորման և հանրային դիրքորոշումների ձևավորման առանցքային գործոն: Առանձնակի ուշադրություն է դարձվում հատուկ նպատակների համար անգլերենի (ESP) կարողունակության կառուցվածքին, որտեղ փոխլրացնող կերպով ներառվում են հաղորդակցական, միջնակության և մասնագիտական կարողությունները:

Լեզվանյութի ընտրության համատեքստում մանրամասնվում են բառապաշարային նվազագույնի ձևավորման վիճակագրական, լեզվաբանական և մեթոդական չափանիշները: Միևնույն ժամանակ, ընդգծվում է բնագիր տեքստերի դերը՝ որպես մասնագիտական բառապաշարի յուրացման և քննական մտածողության խթանման միջոց:

Երրորդ՝ **«Քաղաքագիտական անգլերեն լեզվանյութի մեթոդական դասակարգումը և ուսուցման փուլերը»**, ենթազխում ներկայացվում են քաղաքագիտական լեզվանյութի մեթոդական դասակարգումը և ուսուցման փուլային կազմակերպումը: Առանձնահատուկ կարևորություն է տրվում բառապաշարային միավորների գործածման հաճախականությանը, իմաստաբանական արժեքին, կապակցելիությանը, բազմիմաստությանը և համատեքստային կիրառությանը: Հիմնավորվում է լեզվանյութի մեթոդական դասակարգումը, որի հիմքում դրվում են բառապաշարի յուրացման դժվարության աստիճանը, բարդ բառերի իմաստի կոահման և բառակազմական վերլուծության սկզբունքները: Լեզվանյութի յուրացման դժվարությունները հաղթահարելու նպատակով քաղաքագիտական տերմիններն ու դարձվածային միավորները դասակարգվում են ըստ ութ հիմնական մեթոդական խմբերի՝ հաշվի առնելով հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուների միջև առկա միջլեզվային և ներլեզվային բացասական փոխներթափանցումները և դրական փոխադրումները: Ներկայացվում են նաև ուսուցման փուլային կազմակերպումը, բառիմաստի բացահայտման լեզվական և ոչ լեզվական եղանակները:

Երրորդ՝ **«Քաղաքագիտական անգլերենի ուսուցման մեթոդական համակարգի արդյունավետության ստուգում և փորձարարական հիմնավորում»** գլխի առաջին՝ **«Փորձարարական հարցում և թեստավորում քաղաքագիտական անգլերենի ուսուցման արդիականությունը և յուրացման դժվարությունները բացահայտելու նպատակով»**, ենթազխում ներկայացվում է 2024–2025 ուսումնական տարվա ընթացքում ՀՀ երեք բուհում իրականացված մեկ կիսամյակ տևողությամբ փորձարարական

հետազոտությունը: Հետազոտությանը մասնակցել է Վ. Բոյուսովի անվան պետական համալսարանի 98 ուսանող, Հայ-ռուսական համալսարանի 32 ուսանող և Երևանի պետական համալսարանի 34 ուսանող՝ համապատասխան լեզվական մակարդակներով (A2, B1, B1+): Մասնակցել են 1-4-րդ կուրսերի սովորողները:


Հետազոտությունն իրականացվել է փուլային հաջորդականությամբ՝ հարցում ուսանողների շրջանում, նախափորձարարական (հայտորոշիչ) թեստավորում, փորձարարական ուսուցում և հետփորձարարական թեստավորում: Սովորողների պատասխանները ցույց են տալիս, որ նրանք նախընտրում են քաղաքագիտական անգլերենի ուսուցումը կազմակերպել հաղորդակցական և փոխներգործուն միջավայրում՝ սովորողակենտրոն մոտեցմամբ: Նրանք կարևորում են ուսուցման բովանդակության և մեթոդների համապատասխանեցումը իրենց պահանջներին, հետաքրքրություններին և լեզվական մակարդակին, ինչպես նաև տեսական գիտելիքների ու գործնական հմտությունների համադրումը՝ արդի քաղաքական գործընթացների և բնագիր տեքստերի վերլուծության համատեքստում: Առանձնահատուկ նշանակություն է տրվում մասնագիտական տերմինաբանության յուրացմանը, քաղաքագիտական խոսույթի ըմբռնմանը, հաղորդակցական կարողությունների և քննական մտածողության զարգացմանը: Միաժամանակ նախընտրելի են ակտիվ մեթոդները՝ դերախաղեր, բանավեճեր, խմբային քննարկումներ, ինչպես նաև թվային հարթակների կիրառումը:

Նախափորձարարական (հայտորոշիչ) թեստավորման նպատակն էր բացահայտել սովորողների քաղաքագիտական անգլերենի լեզվահաղորդակցական հմտությունների ձևավորման մակարդակը: Արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ սխալների բնույթը պայմանավորված է բառապաշարի, քերականական կառույցների և լեզվական միավորների իմաստային բարդության յուրացման մակարդակով, ինչպես նաև սովորողների լեզվամտածողության և լեզվական զգացողության առանձնահատկություններով: Ստացված տվյալների հաշվառումը կարևոր հիմք է հանդիսանում մեթոդական համակարգի կատարելագործման և ուսուցման գործընթացում դրա արդյունավետ կիրառման համար:

Երկրորդ՝ **«Փորձարարական ուսուցում. քաղաքագիտական անգլերենի ուսուցման մեթոդական համակարգի կիրառում, արդյունքների վիճակագրական վերլուծություն»**, ենթազբաղվում է փորձարարական ուսուցման ընթացքը և արդյունքների վիճակագրական վերլուծությունը: Հարցման արդյունքների և նախափորձարարական (հայտորոշիչ) թեստավորման վերլուծության հիման վրա մշակվել և ՀՀ բուհերում ներդրվել է քաղաքագիտական անգլերենի ուսուցման մեթոդական համակարգ՝ նպատակաուղղված սովորողների մասնագիտական

լեզվահաղորդակցական կարողունակության զարգացմանը: Սույն մեթոդական համակարգի մշակման հիմքում ընկած սկզբունքներն են՝ սովորողակենտրոն մոտեցում, գիտակցական-ճանաչողական մոտեցում, թեմատիկ խմբավորման սկզբունք, բովանդակության և լեզվի ինտեգրված մոտեցում, առաջադրանքահեն ուսուցում: Փորձարարական ուսուցման նպատակն էր՝ պարզել արդյո՞ք մշակված մեթոդական համակարգը կապահովի դրական արդյունք, որքանով կհաջողվի շտկել և հաղթահարել սովորողների նախափորձարարական (հայտորոշիչ) թեստավորման արդյունքում թույլ տված սխալները, թերությունները, վրիպումներն ու առկա դժվարությունները, որքանով սույն մեթոդական համակարգը կնպաստի սովորողների քաղաքագիտական մասնագիտական լեզվահաղորդակցական կարողունակության զարգացմանը:

Գծապատկեր 1. Սովորողների քաղաքագիտական լեզվահաղորդակցական կարողունակության զարգացմանը նպատակաուղղված մեթոդական համակարգ



Աշխատանքում մանրամասն ներկայացվում է մեր կողմից մշակված և ուսուցման գործընթացում կիրառված մեթոդական համակարգի գործիքակազմը, որը ներառում է.

- ավանդական և ժամանակակից մեթոդների համադրությամբ մշակված ուսուցողական առաջադրանքներ,
- ուսուցողական պատառներ,

- աշխատանքային թերթիկներ,
- ուսումնական առցանց գործիքների միջոցով մշակված փոխներգործուն առաջադրանքներ:

Մշակված մեթոդական համակարգն առանձնանում է նորարարական լուծումներով, մասնավորապես՝ տեսողական օժանդակ նյութերի և ժամանակակից թվային գործիքների (Canva, Miro, Kahoot!, Wordwall, NotebookLM, Sutori, EdPuzzle, Kapwing, Genially, Voice.ai, Quizizz և այլն) համադրմամբ: Ուսուցողական պաստառները ներառում են մասնագիտական իրավիճակներ և հաղորդակցական առաջադրանքներ, որոնք զարգացնում են սովորողների ոչ միայն մասնագիտական լեզվահաղորդակցական կարողունակությունը, այլև քննական ու ստեղծագործական մտածողությունը՝ ստեղծելով թեմայի ամբողջական «մտաքարտեզը»: Որպես տրամաբանական հաջորդականություն՝ կիրառվում են աշխատանքային թերթիկներ, որոնք թիրախային վարժությունների միջոցով ապահովում են քաղաքագիտական տերմինաբանության համատեքստային յուրացումն ու ամրապնդումը:

Մասնագիտական լեզվանյութի ուսուցման սույն գործիքակազմը հենվում է կարողունակահեն և հաղորդակցական մոտեցումների վրա, ինչն ապահովում է լեզվի կիրառականությունը իրական մասնագիտական միջավայրում:

Փորձարարական ուսուցման ավարտին իրականացվել է ստուգողական և փորձարարական խմբերի սովորողների թեստավորում, ամփոփվել են ստացված արդյունքները:

Աղյուսակ 1. Ստուգողական խմբի նախափորձարարական և հետփորձարարական թեստավորման արդյունքների համեմատություն

Աղյուսակ 2. Փորձարարական խմբի նախափորձարարական և հետփորձարարական թեստավորման արդյունքների համեմատություն

Ստուգողական խումբ				
Կուրս՝ 3-րդ	Սովորողների թիվ	Պատասխաններ		
		ճիշտ	մասնակի ճիշտ	սխալ
Նախափորձարարական թեստավորում	25	30	29	66
Պատասխանների ընդհանուր քանակը		125		
Տոկոսային հարաբերությամբ	100%	24%	23.2%	52.8%
Հետփորձարարական թեստավորում	25	32	31	62
Պատասխանների ընդհանուր քանակը		125		
Տոկոսային հարաբերությամբ	100%	25.6%	24.8%	49.6%

Փորձարարական խումբ				
Կուրս՝ 3-րդ	Սովորողների թիվ	Պատասխաններ		
		ճիշտ	մասնակի ճիշտ	սխալ
Նախափորձարարական թեստավորում	25	35	31	59
Պատասխանների ընդհանուր քանակը		125		
Տոկոսային հարաբերությամբ	100%	28%	24.8%	47.2%
Հետփորձարարական թեստավորում	25	66	39	20
Պատասխանների ընդհանուր քանակը		125		
Տոկոսային հարաբերությամբ	100%	52.8%	31.2%	16%

Աղյուսակներից պարզ է դառնում, որ ստուգողական խմբերում առանձնակի աճ չի գրանցվել սովորողների քաղաքագիտական լեզվահաղորդակցական կարողունակության զարգացման տեսանկյունից (1.6% ճիշտ պատասխանների աճ): Մինչդեռ փորձարարական խմբում նկատելի է զգալի աճ (24.8%-ով աճել է ճիշտ պատասխանների թիվը): Եթե 24.8%-ից հանենք ստուգողական խմբի գրանցած 1.6% աճը, ապա կստացվի, որ փորձարարական ուսուցման արդյունքում գրանցվել է 23.2% իրական աճ:

Այսպիսով, շեշտված է, որ մշակված մեթոդական համակարգի կիրառումն ապահովել է դրական շարժընթաց. բարելավվել է սովորողների քաղաքագիտական լեզվահաղորդակցական կարողունակության մակարդակը, բարձրացել են հետփորձարարական թեստավորման արդյունքները, ինչպես նաև զարգացել նրանց մասնագիտական, ճանաչողական, քննական, ստեղծագործական և վերլուծական կարողությունները:

ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ հիմնական եզրահանգումները.

1. Հատուկ նպատակների համար անգլերենի, մասնավորապես քաղաքագիտական անգլերենի, ուսուցման գերակա նպատակը ոչ միայն լեզվական գիտելիքների ձեռքբերումն է, այլև սովորողների մասնագիտական լեզվահաղորդակցական կարողունակության զարգացումը, որի մեթոդաբանական հիմքերը ձևավորվում են գիտակցական-ճանաչողական, սովորողակենտրոն և առաջադրանքահեն մոտեցումների համադրությամբ: Այս գործընթացի առանձնահատկությունն այն է, որ ուսուցման բովանդակությունն ու մեթոդների ընտրությունը հիմնվում են սովորողների թիրախային և լեզվական կարիքների, մասնագիտական և հաղորդակցական պահանջմունքների համակարգված վերլուծության վրա:
2. Քաղաքագիտական անգլերենի ուսուցման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է քաղաքագիտական խոսույթի ժանրային, բովանդակային, կառուցվածքային և գործառույթային առանձնահատկություններն արտացոլող նյութերի ընտրությամբ: Այս համատեքստում առանձնահատուկ կարևորվում է բնագրային տեքստերի կիրառումը, որոնց ընտրությունը պետք է հիմնվի սովորողների լեզվի իմացության մակարդակի, մասնագիտական պահանջմունքների, տարիքային առանձնահատկությունների և մշակութայնության վրա:
3. Քաղաքագիտական անգլերեն լեզվանյութի ընտրության հիմքում ընկած են վիճակագրական, լեզվաբանական և մեթոդական սկզբունքները, իսկ մասնագիտական տերմինաբանության յուրացման դժվարությունները

հաղթահարելու նպատակով արդյունավետ է կիրառել լեզվանյութի մեթոդական դասակարգում: Անգլերենում, հայերենում և ռուսերենում գրաֆիկական, իմաստային, կառուցվածքային ընդհանրությունների և միջլեզվային փոխներթափանցման երևույթների հիման վրա իրականացված դասակարգումը (առանձնացված ութ հիմնական մեթոդական խումբ՝ համապատասխան ենթախմբերով) հնարավորություն է ընձեռում ապահովել նոր լեզվանյութի գիտակցված ճանաչումը, փոխկապակցումն ու երկարատև մտապահումը:

4. Սովորողների քաղաքագիտական լեզվահաղորդակցական կարողունակության զարգացման նպատակով մշակվել և ուսումնական գործընթացում հաջողությամբ փորձարկվել է օրինակելի մեթոդական համակարգ, որը ներառում է ուսուցողական պաստառներ, աշխատանքային թերթիկներ, ավանդական և ժամանակակից մեթոդների համադրությամբ մշակված ուսուցողական առաջադրանքներ և ժամանակակից առցանց ուսուցողական գործիքակազմ, ինչն ապահովում է սովորողակենտրոն և փոխներգործուն ուսումնական միջավայր:
5. ՀՀ բուհերում իրականացված նախափորձարարական և հետփորձարարական թեստավորումների արդյունքների համեմատական վերլուծությունը հաստատում է սովորողների գրանցած դրական շարժընթացը:
6. Փորձարարական ուսուցման արդյունքների վերլուծությունը լիովին ապացուցում է առաջադրված գիտական վարկածը և գիտագործնականորեն հիմնավորում մշակված մեթոդական համակարգի արդյունավետությունը: Սույն համակարգը նպաստում է ինչպես սովորողների քաղաքագիտական լեզվահաղորդակցական կարողունակության, այնպես էլ նրանց ճանաչողական, քննական, ստեղծագործական, վերլուծական մտածողության զարգացմանը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. Փիլիպոսյան Մ., Բնագիր լեզվանյութի կիրառումը քաղաքական անգլերենի ուսուցման գործընթացում, Բանբեր Վ. Բյուրսովի անվան պետական համալսարանի. Մանկավարժություն և հասարակական գիտություններ, 2 (63), Երևան, Լինգվա, 2023, էջ 248–260
2. Փիլիպոսյան Մ., Անգլերենի քաղաքագիտական բառապաշարի ներմուծման և բառիմաստի բացահայտման եղանակները, Բանբեր Վ. Բյուրսովի անվան պետական համալսարանի. Մանկավարժություն և հասարակական գիտություններ, 2 (65), Երևան, Լինգվա, 2023, էջ 104–114

3. Փիլիպոսյան Մ., Փոխներգործուն առաջադրանքների կիրառումը քաղաքագիտական անգլերենի ուսուցման ընթացքում, Մանկավարժական միտք, 1–2 (86–87), Երևան, Տաթև գիտակրթական համալիր, Զանգակ, 2024, էջ 175–180
4. Փիլիպոսյան Մ., Ընկալողական խոսքային գործունեության տեսակների կիրառումը քաղաքագիտական անգլերենի դասավանդման գործընթացում, Ռուսագիտության արդի հիմնախնդիրները գիտամեթոդական հանդես, 15 (19), Երևան, 2025, էջ 359–370
5. Փիլիպոսյան Մ., Փիլիպոսյան Վ., Վերարտադրողական խոսքային գործունեության տեսակների կիրառումը քաղաքագիտական անգլերենի դասավանդման գործընթացում, Մանկավարժական միտք, 1–2 (88–89), Երևան, Տաթև գիտակրթական համալիր, Զանգակ, 2025, էջ 29–37
6. Pilibosyan M., Implementation of the Methodological System of Political English for Developing Learners' Linguistic Competence, Հայագիտական հանդես, 1 (72), Երևան, 2026, էջ 227-239

ПИЛИПОСЯН МАРИНЕ АГВАНОВНА

НАУЧНО-ПРАКТИЧЕСКИЕ ОСНОВЫ ЭФФЕКТИВНОСТИ МЕТОДИЧЕСКОЙ СИСТЕМЫ ОБУЧЕНИЯ ПОЛИТОЛОГИЧЕСКОМУ ПРОФЕССИОНАЛЬНОМУ ЯЗЫКУ (НА ОСНОВЕ АНГЛИЙСКОГО ЯЗЫКОВОГО МАТЕРИАЛА)

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 – «Методика преподавания и обучения» (английский язык).

Защита диссертации состоится 22-го июня 2026г., в 12:00 часов на заседании специализированного совета 020 «Педагогика» КВОН РА по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна, по адресу: 0010, г. Ереван, пр. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. В условиях глобализации, расширения международного сотрудничества и стремительного развития технологий английский язык стал ведущим средством международного общения, особенно в политической, дипломатической и институциональной сферах. Он обеспечивает эффективное взаимодействие представителей различных языковых и культурных сообществ.

Поскольку политика пронизывает все сферы общественной жизни, политическая коммуникация выступает ключевым инструментом интерпретации и анализа общественных процессов. Это требует использования специализированного языка, реализуемого в рамках политического дискурса.

Современные реформы высшего образования в Республике Армения подчеркивают необходимость внедрения новых подходов к обучению иностранным языкам. В этом контексте особую значимость приобретает английский язык для специальных целей (ESP), в частности политологический английский, который играет важную роль в формировании профессиональной языковой коммуникативной компетенции обучающихся, позволяя им эффективно понимать, анализировать и передавать информацию в профессиональной сфере.

Актуальность данного исследования обусловлена необходимостью разработки эффективной методической системы обучения политологическому английскому языку в вузах Армении, основанной на лично-ориентированном подходе и учитывающей профессиональные потребности обучающихся. Дополнительным обоснованием является недостаточная разработанность данной проблемы в отечественной научной литературе.

Исследование направлено на выявление существующих трудностей в формировании профессиональной языковой коммуникативной компетенции и разработку научно обоснованных практических решений, способствующих более эффективному использованию языка в профессиональной деятельности.

Цель исследования. На основе изучения и анализа соответствующего языкового материала разработать и внедрить эффективную методическую систему обучения политологическому английскому языку, направленную на формирование и развитие профессиональной языковой коммуникативной компетенции обучающихся.

Объектом исследования является процесс обучения политологическому английскому языковому материалу.

Предметом исследования является методическая система, направленная на формирование и развитие профессиональной языковой коммуникативной компетенции обучающихся в процессе обучения политологическому английскому языку.

Задачи исследования:

- изучить цели, особенности и теоретические основы обучения английскому языку для специальных целей (ESP),
- проанализировать проблемы обучения политологическому английскому языку и соответствующие учебно-методические материалы,
- определить принципы отбора и классификации языкового материала,
- разработать и апробировать методическую систему обучения,
- провести доэкспериментальное и послеекспериментальное тестирование и статистический анализ,
- обосновать эффективность предложенной системы.

Научная новизна исследования. В армянском контексте разработана и экспериментально апробирована эффективная методическая система, направленная на развитие профессиональной языковой коммуникативной компетенции обучающихся в области политологического английского языка. Ее внедрение в вузах позволило обосновать эффективность данной методической системы на практике.

Предложенная методическая система может быть применена также при обучении другим языкам с целью развития профессиональной коммуникативной компетенции.

Теоретическая значимость исследования. В работе анализируются содержание, задания и упражнения учебников по политологическому английскому языку, изданные в разное время. Теоретическая значимость заключается в определении критериев отбора учебников, выявлении особенностей обучения политическому дискурсу, а также принципов отбора аутентичных текстов и профессиональной лексики.

В результате комплексного анализа текстового, лексического и терминологического материала политологического английского языка разработана методическая система обучения, которая может служить теоретической основой для дальнейших научных и методических исследований.

Практическая значимость исследования. Результаты исследования могут быть использованы в высших учебных заведениях при преподавании политологического английского языка, а также других языков для специальных целей с учетом их специфики. Они могут применяться в системе повышения квалификации преподавателей, а также при разработке учебно-методических материалов.

Внедрение предложенной методической системы способствует повышению эффективности обучения политологическому английскому языку за счет развития профессиональной языковой коммуникативной компетенции обучающихся. Полученные результаты могут быть использованы в дальнейших педагогических и методических исследованиях.

Структура и объем диссертации. Диссертация, объемом 160 страниц, состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложений.

MARINE AGHVAN PILIPOSYAN

**SCIENTIFIC AND PRACTICAL FOUNDATIONS FOR AN EFFECTIVE
METHODOLOGY IN TEACHING ESP FOR POLITICAL SCIENCE (BASED ON
ENGLISH LANGUAGE MATERIALS)**

Thesis submitted for the degree of Candidate of Pedagogical Sciences, specialty 13.00.02 – Teaching and Learning Methodology (English Language).

The defense of the thesis will take place on June 22, 2026, at 12:00 PM, at the session of the Professional Council 020 “Pedagogy” HESC RA to award scientific degrees at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan. Address: 0010, 17 Tigran Mets Ave., Yerevan, Armenia.

SUMMARY

The relevance of the research: In the context of globalization, expanding international cooperation, and rapid technological advancement, English has become the leading medium of international communication, particularly in the political, diplomatic,

and institutional spheres. It ensures effective interaction among representatives of diverse linguistic and cultural backgrounds.

Since politics permeates all areas of public life, political communication serves as a key tool for the interpretation and analysis of social processes. This requires the use of a specialized language implemented within the framework of political discourse.

Current higher education reforms in the Republic of Armenia emphasize the need for new approaches to foreign language teaching. In this context, English for Specific Purposes (ESP), specifically ESP for Political Science, takes on particular significance. It plays an important role in developing professional language communicative competence of learners, enabling them to effectively understand, analyze, and transmit information within their professional field.

The relevance of this study is determined by the necessity of developing an effective methodological system for teaching ESP for Political Science in Armenian universities, based on a student-centered approach and tailored to the professional needs of the learners. It is further justified by the lack of comprehensive research on this topic in Armenia.

The study aims to identify existing challenges in the development of professional language communicative competence and to propose practical, research-based solutions, contributing to more effective language use in professional contexts.

The aim of the research is to develop and implement an effective methodological system for teaching ESP for Political Science, based on the analysis of relevant language material, aimed at forming and developing learners' professional language communicative competence.

The object of the research is the process of teaching the language material of ESP for Political Science.

The subject of the research is the methodological system aimed at the formation and development of learners' professional language communicative competence within the process of teaching ESP for Political Science.

The research objectives:

- to study the goals, characteristics, and theoretical foundations of teaching ESP,
- to analyze the challenges of teaching ESP for Political Science and evaluate corresponding instructional and methodological materials,
- to define principles for selecting and classifying language material,
- to develop and pilot (field-test) a methodological teaching system,
- to conduct pre- and post-experimental testing followed by statistical analysis,
- to substantiate the effectiveness of the proposed system.

The scientific novelty of the research. Within the Armenian context, an effective methodological system, aimed at developing learners' language communicative competence of English in the field of Political Science, has been developed and experimentally validated. Its implementation in higher education institutions has allowed for the practical substantiation of its effectiveness.

The proposed methodological system can also be applied to the teaching of other Languages for Specific Purposes (LSP) to enhance professional language communicative competence.


The theoretical significance of the research. The study examines the content, tasks, and exercises of ESP textbooks for Political Science published in different periods. The theoretical significance lies in defining criteria for textbook selection, identifying the specific features of teaching political discourse, and establishing principles for selecting authentic texts and professional vocabulary.

As a result of a comprehensive analysis of the textual, lexical, and terminological material of ESP for Political Science, a methodological system has been developed that can serve as a theoretical framework for further scientific and methodological research.

The practical significance of the research. The results of the study can be applied in higher education institutions in teaching ESP for Political Science, as well as other LSP courses by adapting the developed methodological system to specific disciplinary needs. They may also be used in teacher training programs and in the development of instructional and methodological materials.

The implementation of the proposed methodological system contributes to improving the effectiveness of ESP courses for Political Science by enhancing learners' professional language communicative competence. The findings can serve as a basis for further pedagogical and methodological research.

The structure and the volume of the thesis. The thesis (160 pages) consists of an introduction, three chapters, a conclusion, a list of references, and appendices.

A handwritten signature in black ink, appearing to read 'P. K. K.', with a horizontal line underneath the main part of the signature.